ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի տեղակալ Հայկ Հարությունյանի՝ Աբու Դաբի կատարած այցի մասին

ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ

Հայկ Հարությունյան

ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ

Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի տեղակալ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ/ԺԱՄԿԵՏԸ

Աբու Դաբի /Արաբական Միացյալ Էմիրություններ/

2018թ. հունվարի 12-15-ը

ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ

Վերականգնվող էներգետիկայի միջազգային գործակալություն /ԻՐԵՆԱ/

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ

Մասնակցություն Վերականգնվող էներգետիկայի միջազգային գործակալության ասամբլեայի 8-րդ նստաշրջանին:

ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ

IRENA-ի ասամբլեայի 8-րդ նստաշրջանի ընթացքում քննարկվեցին վերականգնվող էներգետիկայի ոլորտի զարգացումներին առնչվող մի շարք հարցեր, ինչպես նաև քննարկումներ ընթացան էլեկտրական մեքենաների արտադրության զարգացման մասին:

ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ

Վեհաժողովի շրջանակներում գործընկերների հետ տեղի ունեցան բազմաթիվ հանդիպումներ, քննարկումներ, բանակցություններ: Միջազգային Էներգետիկ Խարտիայի գլխավոր քարտուղարի հետ քննարկվեց 2018թ.-ի կազմակերպության պլանները և

համագործակցության ծրագրերը: Քննարկումներ տեղի ունեցան նաև IRENA-ի գլխավոր քարտուղար Ադնան Ամինի հետ, մասնավորապես Հայաստանում Մասրիկ-1 ծրագրի շրջանակներում կառուցվող արևային կայանի մրցույթի վերաբերյալ: Այցելություններ տեղի ունեցան 11-րդ Ապագա Էներգետիկայի գագաթնաժողովի շրջանակներում իրականացվող արևային, ինչպես նաև էներգախնայողության ցուցահանդեսներին, որոնց ընթացքում հանդիպումներ և բանակցություններ ընթացան արևային և քամու էներգիայի զարգացման մասնավոր սեկտորների՝ մասնավորապես SKY POWER և ACCESS կազմակերպությունների ներկայացուցիչների հետ:

ՀԱՆԴԻՊՄԱՆ ԿԱՄ ՀԱՎԱՔԻ ԺԱՄԱՆԱԿ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ, ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Ասամբլեայի ընթացքում հաստատվեցին IRENA-ի հետագա գործունեության կարգը սահմանող փաստաթղթեր, այդ թվում 2016-2017թթ գործունեության տարեկան հաշվետվությունը: Ներկայացվեցին վերականգնվող էներգետիկայի բնագավառում նոր զարգացումները:

ՀՀ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ

ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ ՀԱՅԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ